

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետև՝ Հայկական կողմ,
և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետև՝ Ռուսական կողմ,
այսուհետև միասին՝ Կողմեր,

Կողմերի պետությունների միջև գոյություն ունեցող բարեկամական
հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման նպատակով,

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության
Կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» 2003 թ.
հունվարի 17-ի համաձայնագրի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության և
Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության
զարգացման մասին» 2013 թ. հունիսի 25-ի պայմանագրի իրականացման նպատակով,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Վարկի գումարը և նպատակը

1. Ռուսական կողմը Հայկական կողմին տրամադրում է մինչև 100 մլն ԱՄՆ դոլար
գումարի չափով պետական արտահանման վարկ ռուսական արտադրության
ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորման
համար՝ համաձայն սույն Համաձայնագրի № 1 հավելվածում նշված ցանկի (այսուհետև՝
Վարկ): Ցանկը կարող է փոփոխվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության
նախարարության և Ռազմատեխնիկական համագործակցության դաշնային
ծառայության փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Վարկի գծով պարտքի
հաշվառումը կատարվում է ԱՄՆ դոլարով:

2. Հայկական կողմը Վարկն օգտագործում է ԱՄՆ դոլարով հաշվարկված
արտադրանքի մատակարարման վերաբերյալ պայմանագրերից (այսուհետև՝
Պայմանագրեր) յուրաքանչյուրի արժեքի մինչև 90 տոկոսի ֆինանսավորման համար,
որոնք կնքվել են սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան
հաստատված՝ պայմանագրերում նշված հայկական և ռուսական
կազմակերպությունների միջև (այսուհետև՝ Լիազորված կազմակերպություններ):

3. Կանխավճարները կազմում են յուրաքանչյուր պայմանագրի արժեքի 10
տոկոսից ոչ պակաս և կատարվում են Հայկական կողմի կողմից՝ հօգուտ ռուսական
Լիազորված կազմակերպությունների ԱՄՆ դոլարով:

Հոդված 2

Վարկի օգտագործումը

1. Հայկական կողմը Վարկն օգտագործում է 2018-2022 թթ. ընթացքում:

2. Վարկի յուրաքանչյուր գումարի օգտագործման ամսաթիվ է համարվում.

մեկ տարուց ավել արտադրական շրջափուլով արտադրանքի մատակարարումների դեպքում արտադրության շրջափուլի յուրաքանչյուր փուլի ավարտը հավաստող ակտի ամսաթիվը կամ կոնոսամենտի, ավիացիոն ապրանքագրի կամ այլ փաստաթղթի ամսաթիվը, որով հաստատվում է արտադրանքի մատակարարումը, և որը նախատեսվում է Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության կողմից սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն ֆինանսավորման համար ընդունված պայմանագրերի պայմաններով,

այլ արտադրանքի մատակարարումների դեպքում կոնոսամենտի, ավիացիոն ապրանքագրի, արտադրանքի մատակարարումը հաստատող այլ փաստաթղթի ամսաթիվը, որը նախատեսվում է Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության կողմից սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն ֆինանսավորման համար ընդունված պայմանագրերի պայմաններով:

3. Վարկի օգտագործման գումարը համապատասխանում է Վարկի հաշվին արտադրանքի մատակարարման համար ռուսական Լիազորված կազմակերպությունների կողմից հայկական Լիազորված կազմակերպություններին ԱՄՆ դոլարով ներկայացված հաշիվների գումարին:

4. Վարկի հաշվին իրականացվող արտադրանքի մատակարարման համար հաշվարկների ժամանակ կիրառվում է հաշվարկների ակրեդիտիվային ձևը:

5. Վարկի օգտագործման ժամկետը լրանալիս Հայկական կողմը 30 օրացուցային օրվա ընթացքում Ռուսական կողմի օգտին կատարում է կոմիսիոն վճարում Հայկական կողմից Վարկի չօգտագործված գումարի 1 տոկոսի չափով: Նշված վճարումը կատարվում է ԱՄՆ դոլարով կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության միջև համաձայնությամբ՝ ռուսական ռուբլով՝ ռուսական ռուբլու նկատմամբ ԱՄՆ դոլարի՝ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի կողմից վճարման ամսաթվից երկու օրացուցային օր առաջ սահմանված փոխարժեքով և ենթակա չէ Ռուսական կողմից փոխհատուցման:

Հոդված 3

Վարկի մարումը

Հայկական կողմը Վարկի փաստացի օգտագործված գումարը (այսուհետև՝ Հիմնական պարտք) մարում է 15 տարվա ընթացքում. յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին, ընդ որում՝ Վարկի մարման առաջին վճարումը կատարվում է 2023 թ. մայիսի 15-ին՝ սույն Համաձայնագրի № 2 հավելվածում սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Հոդված 4

Վարկի տոկոսավճարները

1. Վարկի տոկոսավճարները հաշվարկվում են տարեկան 3,0 տոկոս տոկոսադրույքով:

2. Վարկի տոկոսավճարները հաշվարկվում են ամենօրյա հիմքով՝ Վարկի յուրաքանչյուր գումարի օգտագործման ամսաթվից մինչև Հիմնական պարտքի վերջնական մարման ամսաթիվը ներառյալ, և Հայկական կողմից վճարվում են յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին: Վարկի տոկոսավճարների վերջին վճարումը կատարվում է Հիմնական պարտքի մարման գծով վերջին վճարման հետ միաժամանակ:

3. Վարկի տոկոսավճարները հաշվարկվում են՝ ելնելով 360-օրյա տարում լրացած օրերի փաստացի քանակից (հիմք՝ 365/360):

Հոդված 5

Ժամկետանց պարտք

1. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներում նշված Հիմնական պարտքի մարման և (կամ) Վարկի տոկոսավճարների վճարման համար կատարված ցանկացած վճարում չի կատարվել համապատասխան վճարման ամսաթվին հաջորդող 10 օրացուցային օրվա ընթացքում, այդ պարտքը համարվում է ժամկետանց (այսուհետև՝ ժամկետանց պարտք), և դրա վրա հաշվեգրվում են տոկոսավճարներ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված վարկի դրույքի 150 տոկոսի չափով (այսուհետև՝ ժամկետանց պարտքի տոկոսավճարներ)՝ սկսած վճարման համապատասխան ամսաթվից մինչև դրա ամբողջական ծավալով իրականացման ամսաթիվը ներառյալ:

2. Այն դեպքում, երբ ժամկետանց պարտքը և (կամ) ժամկետանց պարտքի տոկոսավճարները չեն մարվել ժամկետանց պարտքի առաջացման ամսաթվից սկսած 60 օրացուցային օրվա ընթացքում, Ռուսական կողմն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնելու Վարկի հետագա օգտագործումը:

3. Այն դեպքում, երբ ժամկետանց պարտքը և (կամ) ժամկետանց պարտքի տոկոսավճարները չեն մարվել 180 օրացուցային օրվա ընթացքում, Ռուսական կողմն իրավունք ունի միակողմանիորեն սույն Համաձայնագրի համաձայն չմարված պարտքի ողջ գումարը՝ ներառյալ Հիմնական պարտքը, վարկի տոկոսավճարները և ժամկետանց պարտքի տոկոսավճարները (այսուհետև՝ Համախմբված պարտք), և Համախմբված պարտքը հայտարարել անմիջապես մարման ենթակա: Սույն հոդվածի 1-ին կետում նշված դրույքի տոկոսավճարները հաշվեգրվում են Համախմբված պարտքի վրա Համախմբված պարտքի առաջացման ամսաթվից մինչև դրա ամբողջությամբ մարման ամսաթիվը ներառյալ (այսուհետև՝ Համախմբված պարտքի տոկոսավճարներ):

4. Ժամկետանց պարտքի տոկոսավճարները և Համախմբված պարտքի տոկոսավճարները հաշվեգրվում են ամենօրյա հիմքով և հաշվարկվում են՝ ելնելով 360-օրյա տարում լրացած օրերի փաստացի քանակից (հիմք՝ 365/360):

Հոդված 6

Վճարումների բաշխումը և իրականացման կարգը

1. Վարկի գծով բոլոր այն վճարումները, որոնք սույն Համաձայնագրի համաձայն Հայկական կողմից ենթակա են վճարման, կատարվում են հօգուտ Ռուսական կողմի՝ ԱՄՆ դոլարով, կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության միջև համաձայնությամբ՝ ռուսական ռուբլով՝ ռուսական ռուբլու նկատմամբ ԱՄՆ դոլարի՝ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր վճարման ամսաթվից երկու օրացուցային օր առաջ սահմանված փոխարժեքով՝ «Զարգացման և արտաքին տնտեսական գործունեության Բանկ (Վնեշէկոնոմբանկ)» պետական կորպորացիայի

(այսուհետև՝ ՎՆԵԶԷԿՈՆՈՒՔԱՆԿ) վճարման ուղեցույցներին համապատասխան: Սույն Համաձայնագրով Հայկական կողմից վճարային պարտավորությունների կատարման ամսաթվեր են համարվում «ՎՆԵԶԷԿՈՆՈՒՔԱՆԿ»-ի կողմից նշված հաշվի վրա համապատասխան միջոցների գումարների փոխանցման ամսաթվերը:

2. Բոլոր այն գումարները, որոնք ենթակա են վճարման Հայկական կողմից՝ սույն Համաձայնագրին համապատասխան, որևէ կերպով չեն հարկվում և վճարվում են առանց սահմանափակումների, նվազեցումների, մասհանումների կամ փոխհատուցման պահումների:

3. Հայկական կողմից Ռուսական կողմին Վարկի գծով բոլոր վճարումները բաշխվում են հետևյալ հերթականությամբ.

Համախմբված պարտքի տոկոսավճարների վճարում,

Համախմբված պարտքի մարում,

Ժամկետանց պարտքի տոկոսավճարների վճարում,

Ժամկետանց պարտքի մարում,

Վարկի տոկոսավճարների վճարում,

Հիմնական պարտքի մարում:

Հոդված 7

Լիազորված բանկեր

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում հաշվառում կատարելու և հաշվարկների վարման նպատակով Հայկական կողմից լիազորված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և Ռուսական կողմից լիազորված «ՎՆԵԶԷԿՈՆՈՒՔԱՆԿ»-ը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան 60 օրացուցային օրվա ընթացքում կնքում են սույն Համաձայնագրի շրջանակներում հաշվառման և հաշվարկների վարման տեխնիկական կարգի մասին համաձայնագիր:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված լիազորված բանկերը ձեռնարկում են իրենցից կախված բոլոր միջոցները սույն Համաձայնագրի շրջանակներում հաշվառման իրականացման և հաշվարկների վարման ամբողջական և ժամանակին կատարման համար:

Հոդված 8

Պայմանագրերի հաստատումը

1. Հայկական և ռուսական լիազորված կազմակերպությունները միմյանց հետ կնքում են Պայմանագրեր, որոնցով որոշվում են սույն Համաձայնագրի շրջանակներում արտադրանքի մատակարարումների ծավալները, ժամկետները և գները:

Պայմանագրերն ընդունվում են ֆինանսավորման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Ղաշնության ֆինանսների նախարարության կողմից հաստատվելուց հետո:

2. Պայմանագրերը ֆինանսավորման ընդունելու մասին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիմումները, որոնք կազմվում են սույն Համաձայնագրի № 3 հավելվածի համաձայն սահմանված ձևով, ուղարկվում են Ռուսաստանի Ղաշնության ֆինանսների նախարարություն:

3. Պայմանագրերը ֆինանսավորման ընդունելու մասին Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության հաստատումները կամ Պայմանագրերը ֆինանսավորման ընդունելու մասին Ռուսաստանի Դաշնության կողմից հիմնավորված մերժումները՝ կազմված սույն Համաձայնագրի № 4 և № 5 հավելվածների համաձայն սահմանված ձևով, ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

4. Պայմանագրերում փոփոխություններ կատարվում են հայկական և ռուսական կիազորված կազմակերպությունների կողմից՝ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված՝ Կողմերի լիազորված մարմինների հետ գրավոր համաձայնեցմամբ:

Հոդված 9

Կողմերի լիազորված մարմինները

Սույն Համաձայնագրի իրականացման համար Կողմերի պատասխանատու լիազորված մարմիններն են.

Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը,

Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունը և Ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայությունը:

Հոդված 10

Գաղտնիությունը

Կողմերը ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները սույն Համաձայնագրի հետ կապված տեղեկատվության և գրագրության գաղտնիությունն ապահովելու նպատակով:

Հոդված 11

Վաղաժամ մարումը

Հայկական կողմն իրավասու է վաղաժամ մարելու փաստացի օգտագործած Վարկի ցանկացած գումար՝ ինքնարժեքով և առանց լրացուցիչ տուրքերի՝ պայմանով, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան ծանուցումը Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունն ստացել է այդպիսի վաղաժամ մարման ամսաթվից ոչ պակաս, քան 90 օրացուցային օր առաջ:

Հոդված 12

Վեճերն ու տարաձայնությունները

1. Կողմերի միջև սույն Համաձայնագրից բխող կամ Համաձայնագրի իրականացման հետ կապված հարցերով վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են Կողմերի միջև խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

2. Տարաձայնությունները, որոնք կարող են ծագել հայկական և ռուսական կիազորված կազմակերպությունների միջև՝ սույն Համաձայնագրի շրջանակներում պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքում, կարգավորվում են այդ կազմակերպությունների կողմից ինքնուրույն՝ պայմանագրերով նախատեսված պայմաններին և ընթացակարգերին համապատասխան:

Հոդված 13

Փոփոխությունները

Սույն Համաձայնագրում փոփոխությունները կատարվում են Կողմերի համաձայնությամբ և ձևակերպվում են գրավոր:

Հոդված 14

Հավելվածները

Սույն Համաձայնագրի № 1 - 5 հավելվածները դրա անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 15

Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից և գործում է մինչև Կողմերի կողմից դրա դրույթներից բխող բոլոր պարտավորությունների ամբողջական կատարումը: Նշված ծանուցումներն ուղարկվում են դիվանագիտական ուղիներով:

Կատարված է Երևան քաղաքում 2017 թվականի հոկտեմբերի 24-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են: Տարընթերցումների դեպքում օգտագործվում է ռուսերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝

Ռուսաստանի Ռաշնության
Կառավարության կողմից՝

Հավելված № 1

«Հայաստանի Հանրապետության Կառավարության
և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝
Հայաստանի Հանրապետության Կառավարությանը
պետական արտահանման վարկ տրամադրելու
մասին» համաձայնագրի

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետությանը մատակարարվող ռուսական արտադրության
ռազմական նշանակության արտադրանքի

Հավելված №2

«Հայաստանի Հանրապետության Կառավարության
 և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝
 Հայաստանի Հանրապետության Կառավարությանը
 պետական արտահանման վարկ տրամադրելու
 մասին» համաձայնագրի

Հիմնական պարտքի գումարի մարման ժամանակացույց

Մարման ամսաթիվը	Մարման գումարը (ԱՄՆ դոլարով)	Հիմնական պարտքի մասնաբաժինը
15.05.2023	1 500 000,00	1,5%
15.11.2023	1 500 000,00	1,5%
15.05.2024	1 500000,00	1,5%
15.11.2024	1 500 000,00	1,5%
15.05.2025	1 500000,00	1,5%
15.11.2025	1 500 000,00	1,5%
15.05.2026	3 600 000,00	3,6%
15.11.2026	3 800 000,00	3,8%
15.05.2027	3 800 000,00	3,8%
15.11.2027	3 800 000,00	3,8%
15.05.2028	3 800 000,00	3,8%
15.11.2028	3 800 000,00	3,8%
15.05.2029	3 800 000,00	3,8%
15.11.2029	3 800 000,00	3,8%
15.05.2030	3 800 000,00	3,8%
15.11.2030	3 800 000,00	3,8%
15.05.2031	3 800 000,00	3,8%
15.11.2031	3 800 000,00	3,8%
15.05.2032	3 800 000,00	3,8%
15.11.2032	3 800 000,00	3,8%
15.05.2033	3 800 000,00	3,8%
15.11.2033	3 800 000,00	3,8%
15.05.2034	3 800 000,00	3,8%
15.11.2034	3 800 000,00	3,8%
15.05.2035	3 800 000,00	3,8%
15.11.2035	3 800 000,00	3,8%
15.05.2036	3 800 000,00	3,8%
15.11.2036	3 800 000,00	3,8%
15.05.2037	3 800 000,00	3,8%
15.11.2037	3 800 000,00	3,8%
Ընդամենը	100 000 000,00	100%

Հավելված № 3

«Հայաստանի Հանրապետության Կառավարության
և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝
Հայաստանի Հանրապետության Կառավարությանը
պետական արտահանման վարկ տրամադրելու
մասին» համաձայնագրի

Ռուսաստանի Դաշնության
ֆինանսների նախարարություն

ԴԻՄՈՒՄ

պայմանագիրը ֆինանսավորման ընդունելու մասին

Սույնով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, գործելով Հայաստանի Հանրապետության Կառավարության անունից, առաջարկում է ֆինանսավորման ընդունել 20__ թ. _____ «___» №. _____ պայմանագիրը _____ ԱՄՆ դոլար գումարի չափով, կնքված (ռուսական լիազորված կազմակերպության ամբողջական անվանումը, գտնվելու վայրը) և (հայկական լիազորված կազմակերպության ամբողջական անվանումը, գտնվելու վայրը) միջև՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» 20__ թ. _____ «___»-ի համաձայնագրի համաձայն:

Խնդրում ենք հաստատել Ռուսական կողմի համաձայնությունը՝ նշված Համաձայնագրին համապատասխան, նշված պայմանագիրը ֆինանսավորման ընդունելու կապակցությամբ:

Ամսաթիվ

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարություն

Հավելված №4
«Հայաստանի Հանրապետության Կառավարության
և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝
Հայաստանի Հանրապետության Կառավարությանը
պետական արտահանման վարկ տրամադրելու
մասին» համաձայնագրի

Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարություն

ՀԱՍՏԱՏՈՒՄ

պայմանագիրը ֆինանսավորման ընդունելու մասին

Հղում կատարելով Հայաստանի Հանրապետության Կառավարության անունից գործող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ պայմանագիրը ֆինանսավորման ընդունելու մասին 20__ թ. _____ «___» № _____ դիմումին՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունը, գործելով Ռուսաստանի Դաշնության Կառավարության անունից, սույնով հաստատում է, որ 20__ թ. _____ «___» № _____ պայմանագիրը _____ ԱՄՆ դոլար գումարի չափով, կնքված (ռուսական լիազորված կազմակերպության ամբողջական անունը, գտնվելու վայրը) և (հայկական լիազորված կազմակերպության ամբողջական անվանումը, գտնվելու վայրը) միջև, ընդունվում է ֆինանսավորման՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» 20__ թ. _____ «___» -ի համաձայնագրի:

Ամսաթիվ

Ռուսաստանի Դաշնության
ֆինանսների նախարարություն

Հավելված № 5

«Հայաստանի Հանրապետության Կառավարության
և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝
Հայաստանի Հանրապետության Կառավարությանը
պետական արտահանման վարկ տրամադրելու
մասին» համաձայնագրի

Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարություն

Մ Ե Ր Ժ Ո Ւ Մ

պայմանագիրը ֆինանսավորելու

Վկայակոչելով Հայաստանի Հանրապետության Կառավարության անունից գործող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ֆինանսավորման պայմանագրի ընդունման մասին 20__ թ. _____ «___» № _____ դիմումը՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության անունից գործող Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունը սույնով տեղեկացնում է, որ (մերժման պատճառը) 20__ թ. _____ «___» № _____ պայմանագիրը _____ (ԱՄՆ դոլարի չափով)՝ կնքված (ռուսական իրավասու կազմակերպության ամբողջական անվանումը և գտնվելու վայրը) և (հայկական իրավասու կազմակերպության ամբողջական անվանումը և գտնվելու վայրը) միջև, չի ընդունվում ֆինանսավորման՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» 20__ թ. _____ «___»-ի համաձայնագրի:

Ամսաթիվ

Ռուսաստանի Դաշնության
ֆինանսների նախարարություն